

can underline the question of the religious affiliation of Mkhitarists, and their concern to grabar (old Armenian) and ashkharabar (new Armenian).

Mkhitarists played an important role in the study of Armenology.

ԱՐԵՎՄՏԱՅԱՅԵՐԵՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 18-ՐԴ Դ.- 19-ՐԴ ԴԱՐԻ 40-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (Մխիթարյանների փորձը)

Թ. Ա. ԱՍՈՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մխիթարյան միաբանությունը՝ իբրև կրոնական և գիտամշակութային կազմակերպություն, նշանակալի հետք է թողել ընդհանրապես հայ մշակույթի պատմության մեջ, կազմակերպություն, որն այսօր էլ, գուցե ոչ նախկին ինտենսիվությամբ և հզորությամբ, շարունակում է հոգալ հայ ժողովրդի «հոգևոր, բարոյական և մտավոր կարիքները», ինչպես ձևակերպել են իրենք՝ Մխիթարյանները: Հայ հասարակական միտքն էլ անտարբեր չի եղել և միշտ գնահատել է միաբանության գործունեությունը թե իբրև զուտ հայկական երևույթ, թե իբրև եվրոպական մշակույթի բաղադրիչ: Ջարմանալի է, սակայն, որ տրված գնահատականը միանշանակ չէ: Միաբանության մշակութային-հայագիտական գործունեությունը և գրական ու գիտական արտադրանքը մեկ համարվել է նվաճում, մշակութային վերելքի արտահայտություն, մեկ՝ հետադիմություն, ուշացած երևույթ: Երևույթն այդպես են գնահատել այնպիսի հայտնի մտավորականներ, ինչպիսիք են Մ. Նալբանդյանը և Լեոն: Երկուսն էլ վարվել են նույն կերպ. իբրև զուտ հայկական երևույթ՝ Մխիթարյանների արածն ու ստեղծածը նվաճում է, իսկ եվրոպական մշակույթի համեմատությամբ՝ հետադիմություն, ուշացած երևույթ:

Առավել զարմանալի է այն, որ բարձր գնահատելով Մխիթարյանների հեղինակած այս կամ այն աշխատությունը՝ միաբանության գործունեությունն ընդհանրապես համարել են հետադիմական ու «ռեակցիոն» նույնիսկ 20-րդ դարի 2-րդ կեսին: Հանիրավի քննադատական վերաբերմունքն ավելի ցայտուն ու մերկապարանոց է արտահայտվել, երբ Մխիթարյաններին վերաբերող հարցերին մոտեցել են որոշակի քաղաքական նկատառումներով:

Մխիթարյանները ասպարեզ իջան 18-րդ դարի արշալույսին: Մխիթարի և միաբանության գերխնդիրն էր հայոց մեջ գիտությունների և մշակույթի զարգացումը: Պատմականորեն իրենց վերապահված այդ առաքելությունը նրանք իրականացրին հայրենիքից դուրս՝ հաղթահարելով բազում դժվարություններ, անցնելով տառապանքների և փորձությունների միջով: Նրանց ուշադրության կենտրոնում եղել է հայոց լեզուն, և այդ բնագավառում նրանք հասան նկատելի հաջողությունների. գրեցին ու կազմեցին քերականություններ, բառարաններ, զբաղվեցին գրաբարի մաքրմամբ և մատենագրական հուշարձանների հրատարակմամբ: Եվ էլի, չգիտես ինչու, նրանց գործունեությունը հիմնականում գնահատ-

վել է գրաբարի նկատմամբ դրսևորած վերաբերմունքի տեսակետից, այնինչ նրանք նույն հոգածությամբ զբաղվել են նաև աշխարհաբարի հարցերով: Փաստերը ցույց են տալիս, որ Մխիթարյանների ուշադրությունից չի վրիպել արևմտահայերենը՝ իբրև հայերենի զարգացման նոր լեզվատրակ, և ամեն կերպ աշխատել են կանոնավորել ու զարգացնել այն՝ ընթացքում արտահայտելով նաև իրենց տեսակետները գրաբարի և աշխարհաբարի, սրանց փոխհարաբերությունների վերաբերյալ: Սեբաստացուց սկսած՝ գրեթե բոլոր Մխիթարյաններն էլ հասկացել, գնահատել են աշխարհաբարի դերն ու նշանակությունը թե հաղորդակցման, թե գիտության ու մշակույթի զարգացման, թե ընդհանրապես մարդկանց գրքի հետ կապելու առումով, հարցեր, որոնք խիստ արդիական հնչեղություն էին ստացել այդ ժամանակաշրջանում:

Աշխարհաբարի մասին Մխիթարյանների արտահայտած դիտողությունները մի կողմից ներկայացնում են լեզվական իրավիճակը, մյուս կողմից՝ նրանց վերաբերմունքն այդ լեզվատրակի նկատմամբ, իսկ նրանց աշխարհաբար գրքերի լեզուն ոչ միայն արտացոլում է իրական, կոնկրետ լեզվավիճակը, այլև ժամանակագրորեն ցուցադրում արևմտահայերենի զարգացման ընթացքը: Պետք է ասել, որ նշված ժամանակահատվածում աշխարհաբարով գրքեր են հրատարակել շուրջ մեկուկես տասնյակ Մխիթարյաններ:

18-րդ դարի սկզբում միասնական աշխարհաբարի երկփեղկման արդյունքում ձևավորվող արևմտահայերենն ու արևելահայերենը սկսում են զարգանալ՝ ցուցաբերելով հնչյունական, բառապաշարային, քերականական զգալի տարբերություններ, որոնք գնալով ավելի էին խորանում: Օրակարգի հարց էին դառնում արևմտահայերենի կանոնավորումն ու մշակումը: Այս տեսակետից առանձնահատուկ նշանակություն է ստանում Մխիթարյանների ծավալած գործունեությունը: Հենց այն համգամանքը, որ արևմտահայերենի առաջին քերականությունը թեկուզև հայատառ թուրքերենով կազմել և հրատարակել է Մ. Սեբաստացին, արդեն խոսում է ոչ միայն որոշակի վերաբերմունքի, այլև լեզվական քաղաքականության մասին, որին հետագայում հետևեցին նաև նրա աշակերտները:

Սեբաստացու կազմած քերականությունը /1727/ ուսուցողական-գործնական նպատակ հետապնդող գրքույկ է, որը տարրական գիտելիքներ է պարունակում այդ շրջանի արևմտահայերենի վերաբերյալ /սրա հայերեն ավելի ընդարձակ տարբերակը մնացել է անտիպ/: Հետաքրքիրն այն է, որ չնայած տարածված մտայնությանը, թե աշխարհաբար գրելը տգիտության և գռեհկության նշան է, մի մտայնություն, որ կաշկանդում էր նույնիսկ հարյուր տարի հետո ասպարեզ իջած Խ. Աբովյանին, Սեբաստացին դրսևորել է համարձակ շրջահայացություն՝ հավասարության նշան դնելով գրաբարի և աշխարհաբարի միջև: Օրինակների բաժնում նա ասում է. «Թէ այս լեզուովս խօսիք, թէ այն լեզուովն, ամէնքն թող ի փառս աստուծոյ լինին, և այն է ամէնէն լաւն»: Օրինակներից երևում է նաև, որ Սեբաստացին պարզապես ժամանակ չի ունեցել, այլապես ավելի շուտ կգրեր, որովհետև դա դարձել էր հասարակական պահանջ: Նույն 1727թ. հրատարակված «Գիրք քրիստոնեականի վարդապետութեան» գրքի առաջաբանից երևում է ոչ միայն նրա՝ աշխարհաբարի կարևորության գիտակցումը, այլև նրա նկատմամբ զգույշ վարվելու ձգտումն ու պահանջը: Փաստորեն Սեբաստացին առաջինն է, որ առաջ է քաշում նաև այն մշակելու գաղափարը:

Աշխարհաբարի քերականություն կազմելը այնքան էլ հեշտ գործ չէր, եթե նկատի ունենանք, որ այն նոր էր կազմավորվում և իբրև լեզվաորակ՝ հարուստ էր թե նախորդ շրջանից փոխանցված, թե բարբառային, թե օտար և թե նոր ձևավորվող լեզվատարրերով:

Բացի դրանից՝ առավել դժվար էր համընդհանուր բարբառային հիմքի ընտրությունը:

Հասկանալի է, որ բազմաձևության և ազդեցությունների նման շրջապատույտում կողմնորոշվելը պահանջում էր հարուստ լեզվական գիտելիքներ և զգուշություն: Ուսումնասիրելով Ս. Սեբաստացու աշխարհաբար հեղինակությունների լեզվական նյութը՝ նկատում ենք հետևյալ իրողությունը: «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց» գրքույկում Սեբաստացին ոչ հանգամանորեն, բայց գործնականում բավարար մակարդակով ներկայացրել է արևմտահայերենի քերականական առանձնահատկությունները, սակայն դա դեռ չի նշանակում, որ հրատարակվող գրքերի լեզուն ձևված պիտի լիներ նշված առանձնահատկությունների շրջանակներում: Իրականում այդ գրքերի լեզուն ավելի բազմաբնույթ է ու բազմաշերտ. կողք կողքի կիրառվել են գրաբարյան, բարբառային, աշխարհաբարյան և օտարամուտ լեզվատարրեր: Սեբաստացին ինքն էլ հաճախ շեղվում է իր նշած օրինաչափություններից այն առումով, որ շատ են գրաբար և աշխարհաբար զուգաձևությունները, նկատելի է հակումը դեպի գրաբար: Դա շատ լավ է երևում, երբ ուսումնասիրում ենք նրա նույն՝ 1727թ., տպագրված «Գիրք քրիստոնեականի վարդապետութեան» գրքի լեզուն: Այսպես, եթե «Քերականութեան» բառամթերքը հիմնականում աշխարհաբարյան է, և դա գործածելիս Սեբաստացին արտացոլում է արտասանական, հնչյունափոխական իրողությունները, ապա այստեղ նա մեծ մասամբ հետևել է գրաբարին: Գոյականի և դերանվան համակարգերում խիստ նկատելի է հոլովների գրաբար և աշխարհաբար տարբերակների համաժամանակյա կիրառությունը: Արևմտահայերենին բնորոշ օրինաչափությունները ավելի լավ են արտացոլվել բայի համակարգում, չնայած այստեղ էլ գրաբարյան տարբերակները քիչ չեն:

Աշխարհաբարին առնչվող տարաբնույթ հարցերին Սեբաստացին անդրադառնում է նաև իր կազմած «Բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի առաջաբանում: Այստեղ կարևորն այն է, որ Սեբաստացին այլևայլ հարցերի շարքում նշում է, որ բառարանի ստեղծումը պայմանավորված էր մի տեսակ «հասարակական պատվերի» առկայությամբ:

Բանն այն է, որ բառօգտագործման ոլորտում լեզվի չիմացության պատճառով կամայական մոտեցում էր դրսևորվում: Սեբաստացու համար առավել մտահոգիչ էր այն, որ շատերը հաճախ դիմում էին «այլազգական» բառերի: Այնուամենայնիվ նա հասկանում էր, որ նման բառարանը կարող էր օգտակար լինել միայն «գրոց լեզուն» իմացողներին կամ սովորել ցանկացողներին: Դրա համար էլ նաև կազմում է գրաբար-աշխարհաբար և աշխարհաբար-գրաբար բառացանկեր, որոնց քննությունը ցույց է տալիս, որ իբրև գլխաբառ դնելով աշխարհաբարյան արտասանական տարբերակները՝ Սեբաստացին հղում է կատարում տրված բառերի գրաբարյան ձևերը /անծրև, տես անծրև/: Այնուամենայնիվ, դա կարելի է բացատրել ոչ թե գրաբարամոլությամբ, այլ աշխարհաբարը գրաբարի օգնությամբ մշակելու, կանոնավորելու ձգտումով, քանի որ այլ ճանապարհ նոր

լեզվատրակը կանոնավորելու, հարստացնելու և հայացնելու համար չկար: Եթե ընդհանրացնենք արևմտահայերենի բառապաշարային, քերականական առանձնահատկություններն ըստ Սեբաստացու աշխարհաբար գրքերի, ապա կարելի է ասել հետևյալը.

1. Բառապաշարում գերիշխում է գրաբարյան բառաշերտը, իսկ թուրքապարսկական փոխառություններ գրեթե չկան: Թուրքերեն փոխառություններ՝ իբրև հայերեն բառերի հոմանիշ բացատրություններ, շատ են գործածված «Յայկազեան բառարանում», բայց դա էլ որոշակի նպատակադրմամբ:

2. Սեբաստացին մեծ մասամբ պահպանել է բառերի գրաբարյան գրությունը, իսկ այն դեպքերում, երբ արտացոլում է բառերի հնչական վիճակը, ապա հղում է կատարում դեպի գրաբարը կամ գործածում է նաև զուգահեռ ձևերը:

3. Քանի որ Սեբաստացին մեծ մասամբ պահպանում է գրաբարյան ուղղագրությունը, դրա հետևանքով արևմտահայերենին բնորոշ հնչյունափոխական երևույթներն ամբողջովին չեն արտահայտվել, չնայած դրանք պարզորոշ ուրվագծված են:

4. Սեբաստացին ազատորեն օգտագործում է և աշխարհաբարյան, և գրաբարյան հոլովածները: Երևում է, որ արևմտահայերենի հոլովական համակարգը որոշակի տեսք էր ստացել:

5. Բայի համակարգը հիմնականում աշխարհաբարյան է:

6. Գրքի՝ դեպի գրաբար թեքումը նկատելի է նաև գ, առ, ի նախդիրների անսահմանափակ գործածությամբ, միաժամանակ շատ են միայն արևմտահայերենին բնորոշ ալ, նե, մի/մը/ մասնիկների կիրառությունները:

18-րդ դարի վերջում լույս են տեսնում Խ. Սյուրմեյանի «Յամառօտ թուրքա-նութիւն» /1788/ և Ղ. Ինճիճյանի «Տեսութիւն հին և նոր աշխարհագրութեան» /1791/ ձեռնարկները, որոնք գրված էին արդեն գրաբարից բեռնաթափված, պարզ և որոշակիորեն ձևավորված արևմտահայերենով: Եթե Սեբաստացին հակված էր դեպի գրաբարը, ապա նրա աշակերտները դարավերջին խախտում են գրաբար-աշխարհաբար փոխհարաբերությունը հոգուտ աշխարհաբարի: Դա պայմանավորված էր ժամանակի պահանջով. ուզում էին, որքան հնարավոր է, գրավոր խոսքը մատչելի դարձնել ժողովրդին: Խ. Սյուրմեյանի ձեռնարկն ունի առաջաբան, որտեղ մի քանի խոսքով ներկայացնում է իր ժամանակի լեզվական իրավիճակը: Նախ նա փաստում է այն իրողությունը, որ գրաբարը վաղուց անհասկանալի է դարձել, և հասկանում է մարդկանց՝ աշխարհաբարով գրված ձեռնարկ ունենալու ձգտումը: Եվ նա՝ իբրև իրատես գործիչ, անմիջապես արձագանքում է հասարակական պահանջին:

Սյուս կարևոր իրողությունն այն է, որ Սյուրմեյանը նշում է աշխարհաբարի անկազմակերպ լինելը, բարբառների գործածության աշխուժացումը, որոնք դժվարացնում էին նման ձեռնարկներ ստեղծելու գործընթացը: «Եւ թէպէտ դժուար էր աշխարհաբար լեզուով այսպիսի նիւթոց վրա խօսիլ, մանաւանդ որ մեր ազգին ալ շատ ու գանազան աշխարհաբար կայ խօսելոյ, և գրեթէ ամմէն քաղաք կամ ամմէն գաւառ մէկ զմէկէ տարբեր կ'իսօսին»։ գրում է Խ. Սյուրմեյանը: Վերջինս, ինչպես նաև ուրիշները ստեղծված լեզվական իրավիճակի թելադրանքով աշխատում էին գործածել այնպիսի լեզվատրակ, որը շատերին հասկանալի լիներ: Սյուրմեյանն ասում է, որ ինքը ջանացել է գրել «միջակ կերպով, որ բա-

զումք խօսյալ կարենան հասկընալ», միաժամանակ ավելացնում «տեղիս տեղիս տաճկի բառեր բանեցնելու» մասին, քանի որ դրանք «գրեթե ամենուրեք հասկանալի են» եղել:

Լեզվական համեմատությունները ցույց են տալիս հետևյալ տարբերությունները, որ երևան են գալիս դարավերջում 18-րդ դարի առաջին կեսի համեմատ:

1. Եթե Սեբաստացու մոտ բառամթերքը մեծ մասով գրաբարյան է, քիչ է բարբառային տարրը, իսկ օտարաբանություններ գրեթե չկան, ապա դարավերջին իրավիճակը փոխվում է. գրականություն են մուտք գործում բազմաթիվ բարբառային բառեր և հատկապես թուրքերեն անհարկի փոխառություններ, որոնք կայուն գործածություն են ունենում նաև 19-րդ դարի առաջին քառորդում:

2. Սեբաստացին, թեքում ունենալով դեպի գրաբարը, շատ հնչյունափոխված ձևեր չի գործածում, մինչդեռ այս երկու հեղինակների մոտ արտահայտված է հնչյունափոխությունների այն բազմազանությունը, որ գալիս էր միջին հայերենից և հատուկ էր նոր ձևավորվող արևմտահայերենին:

3. Ուղղագրությամբ Սեբաստացին մեծ մասամբ հետևում է գրաբարին, ուստի բաղաձայնական համակարգում տեղի ունեցած տեղաշարժերը նրա «Գիրք քրիստոնեականի» լեզվում արտահայտված չեն, իսկ Սյուրմեյանն ու Ինճիճյանը որոշ չափով արտացոլել են նաև իրենց ժամանակի արտասանությունը, որն առավել նկատելի է բարբառային բառերի և օտարաբանությունների գործածության ժամանակ:

4. Սեբաստացու հոլովական համակարգում գրեթե հավասար բաշխվածություն ունեն գրաբարյան և աշխարհաբարյան ձևերը, իսկ Սյուրմեյանի և Ինճիճյանի ձեռնարկներում տիրապետողը աշխարհաբարյան ձևերն են: Լեզվի աշխարհաբարացման միտումը զգալի է հատկապես դերանունների գործածության մեջ:

5. Կայունանում են արևմտահայերենին բնորոշ *մի / մը* կամ *մըն* ձևով /, *կու / կ* կամ *կը* ձևով /, *նէ, ալ* մասնիկների, *ըլլալ* բառի /Սեբաստացու մոտ՝ *լինիլ*/ գործածությունները:

Ս. Սեբաստացու և նրա անմիջական հաջորդների՝ Խ. Սյուրմեյանի և Ղ. Ինճիճյանի աշխարհաբար աշխատությունների լեզվի համեմատական քննությունը թույլ է տալիս ասելու, որ դրանք իրարից բավականին տարբեր լեզվաորակներ են. առաջինի մոտ հակում է նկատվում դեպի գրաբարը, իսկ վերջիններս դիմում են աշխարհաբարին և ոչ միայն դիմում են, այլև այլոց հետ աշխատում են կազմավորել, տեսքի բերել այն: Միանգամայն որոշակիորեն կարելի է ասել, որ 18-րդ դարի 80-90-ական թվականներին Մխիթարյանների մոտ ձևավորվել էր լեզվական նոր որակ, որ տարբերվում էր 30-60-ական թվականներից: Արևմտահայերենի կազմավորման գործընթացը շարունակվում է նաև 19-րդ դարի սկզբին: Այս շրջանում գրվում են բազմաթիվ աշխարհաբար գրքեր, որոնց մեծ մասը Մխիթարյանների հեղինակածներն են: Տարբեր բնույթի՝ կրոնական, պատմական, գեղարվեստական, բժշկական, խորհրդատվական, բարոյախոսական, գրքեր են հրատարակում Յովի. Զոհրապյանը, Ե. Թովմաճանյանը, Յ. Օղուլլուխյանը, Ի. Փափագյանը, Մ. Ավգերյանը, Ղ. Ինճիճյանը, Մ. Բժշկյանը, Մ. Աղաչրադյանը, Ա. Ճարյանը և ուրիշ Մխիթարյաններ:

Յովի. Զոհրապյանը, զբաղվելով Աստվածաշնչի քննական հրատարակության

հարցերով, մտադրություն է ունեցել «Աստուածաշունչ գրոց» պատմությունը ներկայացնել գրաբար, սակայն, ինչպես երևում է «Ծանուցումն»-ից, ինքն էլ հասկացել է, որ «գրաբարը հասկըցողը քիչ է», ուստի ասում է՝ «դարձուցինք համառօտ կերպով աշխարհաբառ ոճով ըրինք»: Հիշենք, որ Մխիթարյանների նպատակը ժողովրդին կրթելն ու լուսավորելն էր, և այս տեսակետից հարցին մոտենալիս Ջոհրայանը հասկանում է նաև, որ գրաբարով գրված ու գրվող գրքերը ժողովրդին զրկում են շատ բան իմանալու հնարավորությունից: Դրա համար էլ կրոնական բնույթի գրությունները անուղղակիորեն վերաշարադրվում էին աշխարհաբարով: Դրանք կարելի է համարել վերապատմում-թարգմանություն, որտեղ չեն պահպանվում տեքստի առանձնահատկությունները, բայց ազատ կերպով ներկայացվում է իմաստը՝ հաճախ օգտագործելով բառակապակցական այն կաղապարները, որ կան գրաբար տեքստերում: Իր աշխատանքը և ընդհանրապես նման տիպի աշխատանքները Ջոհրայանը արժևորում է բավականին լայն ընդգրկումով, քան մինչ այդ եղած մոտեցումներն էին: Նա կարծում է, որ «աստուածաշունչ գրքերը մարդու միտքն ու հոգին լուսավորում են ոչ միայն հոգևոր, այլև բնական ու քաղաքական առումներով»: Ջզացվում է հեղինակի մտահոգությունը հայերենի վիճակի վերաբերյալ: Նա փաստում է հայերենի՝ տարբեր ազգերի լեզուների լեզվական տարրերով իրար չհասկանալու աստիճան հազեցած լինելը: Այնքան մեծ է եղել տաճկերենի, պարսկերենի, «ֆռնկերենի» ազդեցությունը, «որ ասով շատ արեր է աշխարհաբար լեզունիս ու անանկ փոխուեր է, որ մեկ տեղացին մեկալին ըսածը դժուար կըհասկընա»: Նա նաև մտածում է լեզվի մաքրության մասին, ուստի հրաժարվում է այլազգի բառերի գործածությունից, ապա ընտրում է «ըստամպօլցիի հայերենի ոճը», որը շատերին էր հասկանալի: Այնուամենայնիվ դրանով խնդիրը չի լուծվում, ծագում է նոր դժվարություն. աշխարհաբարի բառապաշարը շատ աղքատ էր, և այդ բացը լրացվում էր հատկապես թուրքերենի միջոցով: Ջոհրայանը կողմնորոշվում է դեպի գրաբարը, չնայած հաճախ ստիպված էր գրաբարյան բառերը տաճկերենով բացատրել: Այսպիսով, «Պատմութիւն աստուածաշունչ գրոց հին և նոր կտակարանաց» գրքի լեզվի քննությունը ցույց է տալիս, որ դրա հեղինակը հասել է իր՝ «զուտ հայերեն» գիրք գրելու նպատակին: Նրա լեզուն մաքուր է, քիչ են գրաբարաբանությունները, ազատորեն օգտվում է բարբառային և խոսակցական բառապաշարից, քերականական համակարգը համեմատաբար կայուն է: Ակնառու է, որ Սեբաստացուց սկսած՝ հայերենը տաճկերենի միջոցով բացատրելու երևույթը հետագայում գնալով խորանում է, դառնում սովորական, իսկ ոմանց մոտ՝ խիստ արտահայտված: Նման ձևով է վարվում նաև Ե. Թովմաճանյանը, թեև նա լեզվի մաքրության և կանոնավորության հարցերում Ջոհրայանի նման նախանձախնդիր չէ: Վերջինիս լեզուն աչքի է ընկնում ուղղագրական, հնչյունափոխական, քերականական զուգաձևությունների առատությամբ, որը անհետևողականության տպավորություն է թողնում: Բոլոր դեպքերում Ե. Թովմաճանյանի լեզուն ցույց է տալիս, որ աշխարհաբարն ավելի մատչելի է դառնում, մյուս կողմից էլ երևում է, որ դեռևս շատ դեպքերում այն հեռու է միօրինակ համակարգ լինելուց:

19-րդ դարի սկզբում Մխիթարյանների մոտ նկատվում է մի միտում. նրանցից ոմանք աշխատում են, որ շարադրանքը լինի միայն հայեցի, զերծ տաճկերեն

բառերից և արտահայտություններից, մյուսները, իրեց գրածը առավել հասկանալի դարձնելու նպատակով, բառագործածության ոլորտում հաճախ են դիմում տաճկերենի օգնությանը: Բանն այն է, ինչպես փաստում են ժամանակակիցները, որ արևմտահայությունը տաճկերենին ավելի լավ էր տիրապետում, քան հայերենին: Հիշենք, որ այդ փաստն էր Սեբաստացուն ստիպել հայերին հայերեն սովորեցնել...թուրքերենի միջոցով: Միտումը շարունակվում է նաև հետագայում: Այսպես, Հովակիմ Օղուլլուխյանը, Մկրտիչ Ավգերյանը հակված են տաճկերեն բառամթերքի գործածությանը, իսկ Իգնատիոս Փափագյանը և Մինաս Բժշկյանը աշխատում են հայերենը ներկայացնել առանց այլ լեզուների օգնության: Օղուլլուխյանն իր դիրքորոշումն արդարացնում է՝ ասելով. «...քանզի բարուք գիտեն որպես մեծ մասը հասկընալու չէ հայկական ոճերը, եթէ չըլլան նմանները տաճկաբար»: Այս առումով բավականին ինքնատիպ երևույթ է Մ. Ավգերյանի ստեղծագործությունը: Ընդհանրապես Ավգերյանը կարծում է, որ հոգեպես կատարյալ կյանքի կարելի է հասնել միմիայն գիտությամբ: Ասածը մասնավորելով հայոց վրա՝ գրում է, որ մեր ազգի մեջ գիտությունը զարգացնելու համար պետք է նախ գրագիտության դուռը բանալ, իսկ այդ դռան բանալին լեզուն է: Նա բարձր է գնահատում Սեբաստացու գործունեությունը, հատկապես նրա կազմած «Բառ գիրքը», որը հնարավորություն էր ընձեռում խորանալու գրաբարի իմացության մեջ և շատ բաներ սովորելու: Սակայն իրականությունն այլ էր. պետք էր ոչ միայն գրաբարը դարձնել դյուրընկալ և մատչելի, այլև աշխարհաբար գրքեր էլ «հանել»: Նա բարձր է գնահատում գրաբարը, ընդունում է նրա կանոնավոր ու «վարպետ» լեզու, «բուն նախնեաց ավանդութիւն» լինելը, իսկ գրաբարի կանոնավորությունն ու ճոխությունը հնարավորություն էր տալիս առանց ճիգ ու ջանքի շարադրել մտադրությունը: Բայց պարզվում է, որ նրա համար տվյալ պահին կարևորը ոչ թե գրվածքի լեզուն է, այլ ժողովրդին «բան հաս կըցնելը»: Այս տեսակետից նա ընդունում է գրաբարի անօգտակարությունը: Համեմատելով գրաբարն ու աշխարհաբարը՝ Մ. Ավգերյանը ցույց է տալիս աշխարհաբարի բառապաշարի, լեզվական այլ միջոցների աղքատությունը, այնուամենայնիվ նա Մխիթարյաններից առաջինն է, որ հանդես է գալիս աշխարհաբարի **ուղղակի** պաշտպանությամբ՝ նշելով, որ այն ևս կարող է «գրով ծաղկել»:

Ինչպես տեսանք, Մ. Ավգերյանի նպատակը մարդկանց ոչ թե լեզու սովորեցնելն էր, այլ բան հասկացնելը: Դա նշանակում է, որ նա իր գրքերի լեզվական ատաղծի մաքրության և կանոնավորման ուղղությամբ այնքան էլ պահանջկոտ վերաբերմունք չպիտի դրսևորի, և դա հենց այդպես էլ է: Լեզվի նկատմամբ դրսևորած անփութության, թե պարզապես միայն հասկանալիության հասնելու ձգտման հետևանքն այն է լինում, որ նրա հեղինակած երեք աշխարհաբար գրվածքներն էլ լի են գրաբարաբանություններով, բարբառային տարրերով, զուգահեռ ձևերի գործածությամբ, իսկ տաճկական բառերի ու արտահայտությունների գործածության մեջ սահմանափակություններ չկան: Եթե նրա նախորդները և ժամանակակիցներն անհրաժեշտաբար տաճկերենն օգտագործում էին հայերեն բառերի ու արտահայտությունների իմաստները բացատրելու նպատակով և այն էլ հատուկ նշումներով ու որոշակի սահմաններում, ապա Մ. Ավգերյանը դրանք օգտագործել է բուն շարադրանքում այնպես, որ շատ հատվածներ կարծես գրված են տաճկերենով հատուկեմտ հայերեն բառերի օգտագործմամբ: Կա-

րելի է ասել, որ այսպիսի լեզվական-կիրառական բազմազանություն Մխիթարյաններից ոչ մեկի լեզուն չունի:

Ի տարբերություն Մ. Ավգերյանի՝ մյուսները աշխատել են եթե ոչ ամբողջովին, գոնե մասամբ կանոնավորել իրենց գրվածքների լեզուն, մինչդեռ, թվում է, Մ. Ավգերյանն այդպիսի նպատակադրում չի էլ ունեցել:

Ի տարբերություն Մ. Ավգերյանի՝ Ի. Փափազյանը և Մ. Բժշկյանը աշխատում են, որքան հնարավոր է, հայերենը ներկայացնել առանց օտար լեզվատարրերի: Մասնավորապես Ի. Փափազյանը աշխարհաբարով հրատարակել է երկու գիրք, երկուսում էլ նույն տեքստը ներկայացրել է և հայերեն, և տաճկերեն: Այս առումով նա, տարբերվելով մյուս Մխիթարյաններից, գրում է. «Նայեցանք, որ հայերենին մէջը տաճկերէն բառ չըխառնենք և ոչ տաճկերէնին մէջը հայու բառ, որպէսզի երկու լեզուին յատկութիւնն ալ պահուի»: Մ. Բժշկյանն էլ գրեթէ լիովին հրաժարվել է օտարաբանությունների գործածությունից: Դրա փոխարեն հակում է նկատվում դեպի գրաբարը: Շատ ուսանելի է և արդիական հնչեղություն ունի այն, որ Բժշկյանն իր «Յմտութիւն մանկանց» գրաբարի դասագրքում հորդորում է նախ լավ իմանալ սեփական լեզուն, հետո նոր յուրացնել այլ լեզուներ: Նա ասում է, որ «խիստ մեծ ամօթ է, որ իր լեզուն կրճգէ և ուրիշներուն կըսորվի և իր ազգը մէկ դի կըթողու, ուրիշ ազգաց պատմութեանը տեղեակ կըլլայ»:

19-րդ դարի 20-30ական թվականներին հանդես եկած Մխիթարյանների լեզվական մշակույթը ըստ էության ոչնչով չի տարբերվում նախորդներից: Գ. Ավետիքյանի, Ղ. Ինճիճյանի աշխարհաբար գրքերի լեզուն նույապես աչքի է ընկնում լեզվական բազմազանությամբ: Նկատելի է հակումը դեպի գրաբար: Նրանք չեն էլ թաքցնում, որ աշխարհաբարի միջոցով փորձում են սովորեցնել գրաբարը: Բայց պետք է ասել, որ այս «գրաբարամոլությունը» ինքնանպատակ չէր. աղքատիկ բառապաշար, չկայունացած քերականական համակարգ ունեցող աշխարհաբարով հնարավոր չէր «բարակ միտք մեյտան հանել» կամ ժողովրդին կապել սեփական հարուստ ու հերոսական պատմության հետ: Հատկապես այս վերջին հանգամանքը շատ կարևոր էր, որովհետև հայ ժողովրդի գիտակցության մեջ ձևավորվում էր ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսությունը: Մեծ մասամբ սրանով էր պայմանավորված նաև աշխարհաբարի կանոնավորման արագ ընթացքը 19-րդ դարի 40-ական թվականներից սկսած: Մասնավորապես բառագործածության ոլորտում ծավալված պայքարը թուրքական բառային փոխառությունների դեմ գնալով լայն թափ էր ստանում: Դրա լավագույն արտահայտություններից մեկը Աբրահամ ճարյանի լեզուն է: Մխիթարյան այս գործիչը աշխարհաբարով հրատարակել է երկրաչափության մի դասագիրք, որը գրված է բավականին մաքուր արևմտահայերենով: Որպես մանկավարժ՝ ճարյանը ձգտել է ուսուցումը դյուրացնել թե դասագրքերը համառոտելով, թե աշխարհաբար լեզուն գործածելով: Չնայած աշխարհաբարի մասին դատողություններ չի արել, բայց լեզվի նկատմամբ դրսևորած խնամքոտ վերաբերմունքից երևում է, որ կարևորել է նրա մաքրությունը, կանոնավորությունը և մշակումը: Նշենք Ա. ճարյանի լեզվի մի քանի առանձնահատկություններ, որոնք հետագայում ընդհանրանալու էին:

Ա. ճարյանի բառապաշարը աչքի է ընկնում մաքրությամբ, անհարկի գործածված բարբառային բառեր ու արտահայտություններ գրեթե չկան, իսպառ բացա-

կայուն են թուրքական փոխառությունները: Հստակորեն նկատելի է դրանցից ազատվելու միտումը, որ արդեն նկատվում էր Մ. Բժշկյանի մոտ: Նախորդների լեզուն ուղղագրության տեսակետից աչքի չէր ընկնում միօրինակությամբ: Ուղղագրական տարբերակները բավականին շատ էին նույնիսկ նույն հեղինակի լեզվում: Որոշ դեպքերում էլ կար կամայական մոտեցում: Օրինակ, այդպես էր վ հնչույթի գրության ժամանակ: Ա. ճարյանը, գերազանցապես հենվելով գրաբարի վրա, աշխատում է խուսափել ուղղագրական տարբերակներից: Քերականական համակարգը գերազանցապես աշխարհաբարյան է: Այսպիսով, կարելի է ասել, որ ճարյանի լեզուն այդ շրջանի լեզվական մշակույթի լավագույն արտահայտություններից մեկն է: Նա կարողացել է մաքրել լեզուն, կանոնավորել՝ հենվելով կայունացած, որոշակի տեսքի եկած լեզվական միջոցների վրա: Միաժամանակ նկատելի է, որ լեզվի կանոնավորման գործընթացում Ա. ճարյանը հատկապես բառապաշարի մաքրման և հարստացման դեպքում կողմնորոշվում է դեպի գրաբարը:

Ի մի բերելով ասվածը՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Առանձնակի մեծ սեր ու հակում դրսևորելով գրաբարի նկատմամբ՝ Մխիթարյանները եղան աշխարհաբարի առաջին լուրջ պաշտպանները:

2. Աշխարհաբարի զարգացումը Մխիթարյանների մոտ ընթացել է գրաբարաբանությունների, օտարաբանությունների հաղթահարման, մաքրման և քերականական համակարգի կանոնավորման ու ամրակայման ճանապարհով: Այդ ընթացքը կարելի է բաժանել երեք փուլերի.

ա/ 1-ին շրջանը ընդգրկում է մինչև 18-րդ դարի 90-ական թվականները, երբ դեռ լույս չէին տեսել Ղ. Ինժիճյանի և Խ. Սյուրմեյանի գրքերը: Այս շրջանը ներկայանում է Մ. Սեբաստացու աշխատանքների լեզվի միջոցով:

բ/ 2-րդ շրջանն ընդգրկում է 1790-ական թվականներից մինչև 19-րդ դարի 20-ական թվականները: Այս շրջանում Մխիթարյան հայրերի լեզուն ավելի ու ավելի է մոտենում բուն ժողովրդախոսակցական լեզվին:

գ/ 3-րդ շրջանը սկսվում է 19-րդ դարի 20-ական թվականներից: Այս շրջանում են հրատահակվում Բժշկյանի, ճարյանի՝ կանոնավոր աշխարհաբարով գրված գրքերը: Ավելացնենք, որ հետագայում կայունացող քերականական համակարգի համեմատ օրակարգի առաջին հարցը բառապաշարի մաքրության խնդիրն էր դարձել, որի լուծման մեջ ներգրավվեց ողջ արևմտահայ մտավորականությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Աճենյան Վ.*, Գրական արևմտահայերենի ծավալումը, Երևան, 1971:
2. *Ասոյան Թ.*, Վեներտիկի Մխիթարյանները և աշխարհաբարի հարցերը, Եր., 2001:

ХОД РАЗВИТИЯ ЗАПАДНО-АРМЯНСКОГО ЯЗЫКА В 40-Х ГГ. 18-19-ВВ. (ОПЫТ МХИТАРИСТОВ)

Т. А. АСОЯН

В начале 18в. раздвоение единого грабара привело к формированию и развитию вос-

точноармянского и западноармянского языков. В начальный период наблюдалось стремительное развитие западноармянского языка, и важную роль в этом процессе сыграли представители Ордена Мхитаристов. Изучение ашхарабара в их книгах показывает, что мхитаристы уделяли большое внимание западноармянскому языку, очищая и обогащая его лексику и стабилизируя его грамматический строй. Если до 90-ых годов 18в. и в первой четверти 19в. на западноармянский язык оказали значительное воздействие грабар, турецкий язык, ряд диалектов (особенно на лексику), то начиная с 20-ых годов язык мхитаристов очищается и упорядочивается. В этом смысле большую роль играют М. Себастаци, Х. Кюрехян, Г. Инчилян, Ов. Зограбян и другие.

WESTERN ARMENIAN LANGUAGE DEVELOPMENT PROCESS FROM 1700'S TO 1840'S

T. A. Asoyan

The division of ashkharabar (new Armenian) led to the formation and development of the eastern and western Armenian languages.

Western Armenian developed quickly in the first stage, the representatives of Mkhitarist congregation played an important role in this process. They showed considerate attitude to western Armenian, purifying and enriching the vocabulary and setting the grammatical structure. If eastern Armenian was under the influence of grabar (old Armenian) till 1790s and in the first quarter of 19th century was under the influence of dialects and the Turkish language, then in the 20th century the language of Mkhitarists became pure and stable.

ԲԱՑԱՌԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈՒՆՎՆԵՐՈՎ ԳՈՅԱԿԱՆ ՈՐՈՇՉԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ս. Կ. ԽԱՆԴԱՆՅԱՆ

Գղչ դասախոս

Արդի հայերենի գրավոր և բանավոր հաղորդակցման ընթացքում մենք գործածում ենք բացառական և գործիական հոլովներով գոյական որոշիչ ունեցող գոյականական բառակապակցություններ: Եթե փորձենք այս բառակապակցությունները դասակարգել ըստ իրենց բովանդակության և իմաստային դրսևորումների, կնկատենք, որ սրանց գործածության դաշտը ավելի փոքր է, քան ուղղական և սեռական հոլովներով գոյական որոշիչ ունեցող գոյականական բառակապակցություններում: Կարող ենք ասել, որ գոյականի ուղղական հոլովով գոյականական բառակապակցություններն ունեն մոտ 25, իսկ սեռական հոլովով գոյականական բառակապակցությունները՝ 30 իմաստային խմբեր:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործիական որոշիչները բացառականի համեմատ ավելի հաճախ են հանդիպում, իսկ ներգոյականով որոշիչները՝ հազվադեպ, միայն մի շարք դեպքերում: Եղածները օտարաբանություն են, բայց հայերենում առկա իրողություններ. այսպես՝ Հայաստանում Ամերիկա-